

## Փոխաբերության թարգմանության որոշ խնդիրների շուրջ

Հ. Գ. Բաղդասարյան

Երևանի պետական համալսարանի ռումանական բանասիրության ամբիոն, Երևան, Հայաստան  
Corresponding author. E-mail: h.baghdasaryan@ysu.am

Paper received 02.01.18; Revised 08.01.18; Accepted for publication 10.01.18.

<https://doi.org/10.31174/SEND-PH2018-150VI43-01>

**Անփոփազիք:** Հոդվածի նպատակն է քննել փոխաբերության թարգմանությանն առնչվող տարբեր խնդիրներ՝ ի մի բերելով այս հարցի շուրջ տարբեր թարգմանաբանների կարծիքները: Թեև փոխաբերությունը դարձել է տարբեր ուսումնասիրությունների առարկա և առաջարկվել են դրա տարբեր սահմանումներ ու դասակարգման սկզբունքներ, այնուամենայնիվ փոխաբերության թարգմանության հնարների և սկզբունքների շուրջ դեռևս չկա միասնական կարծիք: Իրականում խոսքը դիմամիկ հասկացության մասին է, որը դասակարգելիս անհնար է կատարել խիստ սահմանազատումներ, իսկ թարգմանության հնարի ընտրությունը, ի վերջո, որոշվում է տեքստի հեղինակի հաղորդակցական դիրքորոշմամբ:

**Բանալի բառեր.** փոխաբերություն, թարգմանություն, լեզվական և արտալեզվական գործոններ, թարգմանական հնար, հաղորդակցական դիտավորություն, դիմամիկ հասկացություն

Փոխաբերության թարգմանությունը կապված է մի շարք լեզվաբանական, մշակութաբանական, գրականագիտական, փիլիսոփայական, լեզվաճանաչողական և այլ խնդիրների հետ: Թեև փոխաբերությունը դարձել է տարբեր ուսումնասիրությունների առարկա և առաջարկվել են դրա տարբեր սահմանումներ ու դասակարգման սկզբունքներ (Պ. Նյումարկ, Ռ. Ռաբադան, Ջ. Լակոֆ և Մ. Ջոնսոն և այլք), այնուամենայնիվ փոխաբերության թարգմանության հնարների և սկզբունքների խնդիրը դեռևս չի ստացել իր սպառիչ լուծումը: Տարբեր թարգմանաբանների ուսումնասիրություններում ակնհայտ է փոխաբերության թարգմանության խնդիրների շուրջ տարակարծությունը: Եթե, մի կողմից, որոշ թարգմանաբանների պնդմամբ (Յու. Նայթա, Մ. Դագու) այն անթարգմանելի է, քանի որ խոսքը անկրկնելի և ինքնատիպ ստեղծագործական երևույթի մասին է, ապա, մյուս կողմից, փոխաբերությունը թարգմանելի է և թարգմանական դժվարին խնդիրներ չի առաջադրում (Կ. Ռայս, Բ. Հաթիմ, Մ. Մասոն) կամ էլ այն թարգմանելի է, թեև միջլեզվական անհամարժեքության մեծ խնդիրներ է առաջադրում (Ռ. Ռաբադան Ալվարես, Գ. Տուրի, Պ. Նյումարկ): Այս առումով հատկանշական է Մ. Մնել-Հորնբիի տեսակետը, որը կարծես թե փորձում է համատեղել այս երկու ծայրահեղ կարծիքները՝ գտնելով, որ չի կարելի հաստատել, որ փոխաբերությունը թարգմանելի է կամ անթարգմանելի, քանի որ թարգմանության տեքստում դրա հաղորդման հնարավորությունը կախված է տվյալ տեքստից և *ad hoc* գործոններից:

Պ. Նյումարկը իր «Manual de traducción» (1992) գրքում առաջարկում է փոխաբերությունների դասակարգման և թարգմանության որոշ սկզբունքները՝ ելնելով գործնական թարգմանությունների իր փորձից: Հատկանշական է Պ. Նյումարկի՝ փոխաբերության լայն ըմբռնումը,

որի տակ նա հասկանում է ամեն մի փոխաբերական արտահայտություն՝ լինի այն փոխաբերական իմաստով օգտագործված բառ, վերացական հասկացության անձնավորում (օրինակ՝ *modesty forbids me - համեստությունը ինձ թույլ չի տալիս*) և այլն: Ըստ կառուցվածքի փոխաբերությունները կարող են լինել պարզ, որոնք ներկայացված են մի լեզվական միավորով, և ծավալուն, այն է՝ արտահայտություն, նախադասություն, տեքստ:

Պ. Նյումարկը առանձնացնում է փոխաբերությունների վեց տեսակ՝ մարած (*metáforas muertas*), կլիշե-փոխաբերություն (*metáforas-tópicas o cliché*), ստանդարտ (*metáforas estereotipadas o estándar*), ադապտացված (*metáforas adaptadas*), նորաստեղծ (*metáforas recientes*) և ինքնատիպ (*metáforas originales*) [4, էջ 150-159]:

Մարած են այն փոխաբերությունները, որոնց փոխաբերական բնույթն այլևս չի ընկալվում: Որպես կանոն, թարգմանիչը քիչ դժվարությունների է հանդիպում դրանք թարգմանելիս, սակայն միշտ հնարավոր չէ դրանք թարգմանել բառացի: Հաճախ պատկերը երկու լեզուներում կարող է չհամապատասխանել, սակայն, ըստ Նյումարկի, այս փոխաբերությունները յուրահատուկ են նրանով, որ պատկերավորությունը «մարել» է և հաղորդվում է միայն իմաստը: Մեր կարծիքով, մարած փոխաբերությունների վերոհիշյալ սահմանումը կարելի է կիրառել նաև կլիշե-փոխաբերությունների նկատմամբ: Բացի այդ, Նյումարկի կարծիքով, մի կողմից, դժվար չէ թարգմանել մարած փոխաբերությունները, մյուս կողմից, դժվարություններ են առաջանում դրանց բառացի վերարտադրության ժամանակ:

Կլիշե-փոխաբերությունների մեջ Նյումարկը ներառում է այն փոխաբերությունները, որոնք կորցրել են իրենց գեղագիտական արժեքը և ավելի հաճախ հանդես են գալիս տարբեր

հարանշանակային գործառույթներով՝ ավելի պարզ, հաճախ ավելի հուզականորեն որևէ միտք արտահայտելու համար (հմմտ. *use up every ounce of energy-gastar las últimas energías, at the end of the day-al fin y al cabo*): Տվյալ դեպքում թարգմանիչը ընտրում է թարգմանության լեզվի հուզարտահայտչական որևէ համապատասխան միջոց՝ ընթերցողի վրա ավելի մեծ ներգործություն թողնելու նպատակով: Ինչպես արդեն նշել ենք, երկրորդ խումբը գրեթե չի տարբերվում առաջին խմբից, մանավանդ որ, ըստ Նյումարկի, ընթերցողի խնդիրն է՝ դրանք սահմանազատել կամ ոչ:

Ըստ Նյումարկի՝ ստանդարտ և կլիշեփոխաբերությունների սահմանները հաճախ խաչաձևվում են: Ստանդարտ են այն փոխաբերությունները, որոնք արդյունավետ միջոց են կոնկրետ կամ վերացական հասկացություններ նկարագրելու համար, ընթերցողի վրա թողնում են ուժեղ հուզական ազդեցություն և, ի տարբերություն մարած փոխաբերության, բնութագրվում են զանազան գեղագիտական գործառույթներով: Նման փոխաբերությունների թարգմանությունը կարող է խնդիրներ առաջադրել, քանի որ դրանք կարող են լինել հնացած կամ էլ սոցիալական կամ տարիքային որոշ խավին բնորոշ: Նյումարկի համար հնացած են համարվում այնպիսի փոխաբերական արտահայտություններ, ինչպիսիք են *he's in a giving humour (le ha dado la vena de generosidad)*, *he's a man of a good appearance (es bien parecido)* և այլն: Նյումարկը առաջարկում է ստանդարտ փոխաբերությունների թարգմանության տարբեր հնարներ՝ հատկապես կարևորելով հարուստ պատկերային համակարգով համարժեքները, թեև միշտ հնարավոր չէ ապահովել պատկերային համապատասխանություն:

Նյումարկը աղապատացված փոխաբերություններին է դասում հեղինակային փոխաբերական դիպվածաբանությունները, որոնց թարգմանության ժամանակ հարկ է առավելագույն չափով փոխաբերությունը համապատասխանեցնել թարգմանող լեզվի նորմերին: Այս դեպքում անհրաժեշտ է խուսափել բառացի թարգմանություններից, երբ, օրինակ, Ռեյզանի հրապարակախոսական խոսքը անհասկանալի է այլ լեզվակիրների համար. հմմտ. *sow division- sembrar la división*.

Ըստ Նյումարկի՝ նորաստեղծ են այն փոխաբերությունները, որոնցից շատերը անանուն են և բնագրի լեզվում լայն տարածում ունեն: Մրանցից շատերը արտահայտում են նոր հասկացություններ և թարգմանվում նորաբանությունների թարգմանության հնարներով, օրինակ՝ *walkman* նորաբանությունը կարելի է իսպաներեն և հայերեն թարգմանել նկարագրական հնարով՝ *transistor portátil*, շարժական նվագարկիչ: Այնուամենայնիվ, հարց է ծագում. նորաստեղծ

ասելով ինչպիսի՞ ժամանակային սահմանափակում է առաջարկում հեղինակը, բացի այդ, չի պարզաբանվում, թե ինչ է նորաբանությունը և ինչ հնարներով այն պետք է թարգմանել:

Եվ վերջապես, վեցերորդ խմբի փոխաբերությունները, այսինքն՝ ինքնատիպ փոխաբերությունները, Նյումարկը առաջարկում է թարգմանել բնագրին հնարավորին չափ մոտ, քանի որ հեղինակային փոխաբերությունները արտացոլում են գրողի անհատական ոճը, ինչպես նաև նպաստում թարգմանության լեզվի բառապաշարի հարստացմանը: Իհարկե, եթե փոխաբերություններում առկա է մշակութային տարր, ապա այն պետք է փոխարինել ընթերցողի համար ավելի ընկալելի պատկերով:

Մեր կարծիքով, Նյումարկի ուսումնասիրության մեջ տրվում է փոխաբերության շատ լայն սահմանում, փոխաբերությունների դասակարգման մեջ հստակ չեն սահմանազատվում առաջին, երկրորդ և երրորդ խմբերը, որոնց սահմանները խաչաձևվում են, իսկ դրանց թարգմանության հնարները քննվում են՝ հաշվի չառնելով կոնկրետ համատեքստը, հեղինակի հաղորդակցական դիտավորությունը, ինչպես նաև այն գործառական ոճը, որի սահմաններում գործածվել է տվյալ փոխաբերությունը:

Պ. Նյումարկի՝ փոխաբերության վերոհիշյալ մեկնաբանություններում ակնհայտ է ավանդական մոտեցումը, ըստ որի փոխաբերությունը դեկորատիվ ճարտասանական հնար է, որը չի ազդում մեր հասկացական համակարգի վրա, իսկ լեզվի գործածության մեջ կարելի է զանազանել «նորմատիվ» և փոխաբերական (բառացի՝ բուն լեզվից «ջեղում») ունեցող տարբերակներ: Իսկ ահա արդի՝ ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից փոխաբերությունը մարդու ճանաչողական գործունեության անքակտելի տարրերից է, որն արտացոլվում է լեզվում: Այս տեսանկյունից զանազանում են հասկացական փոխաբերություններ և դրանց դրսևորումները լեզվում՝ փոխաբերական արտահայտություններ: Ըստ Լակոֆի և Ջոնսոնի՝ լեզուն իր էությանմբ փոխաբերական է, քանզի մեր աշխարհատեսողությունը հիմնվում է այն գաղափարի վրա, որ մեր մտածողությունը նախապես կազմակերպված է փոխաբերական հասկացություններով, որը թույլ է տալիս հասկանալ վերացական հասկացությունների տրամաբանությունը՝ հիմնվելով ավելի կոնկրետ հասկացությունների վրա [3]: Նման մոտեցման դեպքում փոխաբերությունը այլևս չի դիտարկվում որպես գուտ ճարտասանական հնար, այլ դառնում է մեր աշխարհատեսողության ձևը:


Պ. Նյումարկը առաջարկում է փոխաբերության թարգմանության տարբեր հնարներ՝ հաշվի

չառնելով հաղորդակցական համատեքստի դերը: Փոխաբերության արդի ուսումնասիրություններում կարևորվում է գործառական (նկարագրական) մոտեցումը, որտեղ փորձ է արվում առաջարկել փոխաբերության վերլուծության կաղապարներ՝ հիմնված երկլեզվյան կորպուսների վրա, որոնք արտացոլում են իրական երևույթներ [12; 6]: Մ. Մնել-Հորնբին ինտեգրացված մոտեցում է ցուցաբերում փոխաբերության թարգմանության խնդրին, մերժում տարբեր դասակարգումներ, թարգմանության վերացական հնարներ՝ առանձնահատուկ կարևորելով փոխաբերության հաղորդակցական արժեքը տվյալ համատեքստում:

Իսպանագիտական աղբյուրներում փոխաբերության թարգմանության խնդիրը դարձել է Եվա Սամանիեգոյի հատուկ քննության առարկան [8; 9; 10; 11]: Վերջինս քննելով փոխաբերության թարգմանության վերաբերյալ առավել հայտնի հեղինակները՝ առանձնացնում է տարբեր փոփոխակներ, որոնք ներգործում են փոխաբերության թարգմանության գործընթացում: Այդ շարքում իրենց հաճախականությամբ աչքի են ընկնում հետևյալ փոփոխակները. ազգամշակութային տարրերը, փոխաբերական արտահայտության հաղորդակցական միտումը, նրա գործառական կարևորությունը և տեղեկատվական ծանրաբեռնվածությունը,

տիպաբանությունը, համատեքստային սահմանափակումները, թարգմանող և թարգմանվող լեզուների ձևական և հասկացական համակարգերի ընդհանրության աստիճանը, մի լեզվի ազդեցությունը մյուսի վրա, տվյալ հնարի բառայնացման աստիճանը, թարգմանչի կոմպլեքսիտետը, ընկալողի ընդունելիության աստիճանը, տեքստային տիպերը և ժանրերը, որում օգտագործվել է տվյալ փոխաբերությունը, ոճական հարանշանակությունները և իմաստային գույքորդումները, միջլեզվական անիզոմորֆիզմի աստիճանը թարգմանող և թարգմանվող լեզուների միջև, փոխաբերության մեկնաբանելի լինելը և նրա ճանաչողական արժեքը և այլն [11, էջ 54]: Այս փոփոխակների շարքում հարկ ենք համարում նշել նաև տեքստի հեղինակի աշխարհապատկերման փոխաբերական կաղապարների, ինչպես նաև տեքստի հասկացութային շերտի ճանաչողական-գործաբանական արժեքը, թարգմանող և թարգմանվող լեզուները կրողների պատմամշակութային և լեզվական շփումները և այլ գործոններ: Ի մի բերելով տարբեր թարգմանաբանների կարծիքը՝ Սամանիեգոն կարծում է, որ փոխաբերության թարգմանության գործընթացում առավել մեծ ազդեցություն են թողնում հետևյալ գործոնները.

**Փոխաբերության թարգմանության հիմնական գործոնները ըստ տարբեր թարգմանաբանների**



**Գծազիր 1**

Պատկերավոր արտահայտությունները թարգմանելիս պետք է հաշվի առնել նաև թարգմանող և թարգմանվող լեզուների պատկերավոր ավանդույթների ազգային առանձնահատկությունները, գրական ավանդույթները, ինչպես նաև փոխաբերականացման տարբեր աղբյուրների

առկայությունը լեզուներում: Այսպես, ի տարբերություն հայերենի, իսպաներենում փոխաբերականացման կարևոր աղբյուրներից է կրոնական բառապաշարը: Մեծ նշանակություն ունեցող իրադարձությունը իսպանացին բնութագրում է որպես de importancia transcendental, Խոսե Մարտինի Կուբայում հաճախ անվանում են

Apóstol de la Libertad, իսկ անկախության համար զոհված մարտիկներին mártires de la Revolución: Բհարկե, լեզուներում փոխաբերականացման աղբյուրների միջև տարբերությունը հարաբերական է. հայերենում նույնպես կան կրոնական բառապաշարի վրա հիմնված փոխաբերություններ (հիշենք Մուրացանի «Առաքյալը»): Թարգմանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ փոխաբերականացման յուրաքանչյուր աղբյուրի տեսակարար կշիռը թարգմանող և թարգմանվող լեզուներում, խուսափել բառացի այնպիսի թարգմանություններից, որոնք կարող են հանգեցնել թարգմանող լեզվի բառաբերականական նորմերի խախտման, իսկ հարկ եղած դեպքում թարգմանող լեզվում դիմել մարած փոխաբերությունների, որոնք չեն խախտում տեքստի բնական՝ սովորական շարադրանքը: Դրա հետ մեկտեղ հնարավոր դեպքերում պետք է թարգմանող լեզվում հաղորդել յուրօրինակ պատկերը, որը նպաստում է տվյալ

լեզվի բառապաշարի հարստացմանը, հնարավորություն ընձեռում ծանոթանալու այլ ժողովրդի մտածողության առանձնահատկություններին, ինչպես նաև ստեղծում ազգային երանգավորում:

Տարբեր թարգմանաբաններ (Ռ.Ռաբադան Ալվարես, Տուրի, Պ. Նյունարկ և այլք) առաջարկում են փոխաբերության թարգմանության տարբեր, երբեմն նույնիսկ հակասական հնարներ, որոնք արտացոլում են դրա թարգմանելիության տարբեր աստիճաններ՝ կախված լեզվական և արտալեզվական մի շարք գործոններից, որոնց կարևորությունը որոշվում է հաղորդակցության տվյալ իրադրության մեջ: Իրականում խոսքը դինամիկ հասկացության մասին է, որը դասակարգելիս անհնար է կատարել խիստ սահմանազատումներ, իսկ թարգմանության հնարի ընտրությունը, ի վերջո, որոշվում է տեքստի հեղինակի հաղորդակցական դիրքորոշմամբ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ / REFERENCES

1. Dagut M. "Semantic "voids" as a problem in the translation process", in Even-Zohar I. y Toury G. (eds.), Translation Theory and Intercultural Relations. Poetics Today, Vol. 2, № 4, 1981, p. 61-71.
2. Hatim B., Mason L. Teoría de la traducción: una aproximación al discurso. Barcelona: Editorial Ariel, S. A., 1995.
3. Lakoff G. and Johnson M. Metaphors We Live By. Chicago and London: University of Chicago Press, 1980.
4. Newmark P. Manual de traducción (versión española de Virgilio Moya). Madrid: Ediciones Cátedra, 1992.
5. Nida E., Taber Ch. La traducción: Teoría y práctica. Madrid: Ediciones Cristiandad, 1986.
6. Rabadán Alvarez R. Equivalencia y traducción. Problemática de la equivalencia transléctica inglés-español. León: Universidad de León, 1991.
7. Reiss K., Vermeer H. Fundamentos para una teoría funcional de la traducción (traducción de Sandra García Reina y Celia Martín de León). Madrid: Ediciones Akal, 1996.
8. Samaniego Fernández E. Estudios sobre la metáfora (II): La metáfora y los estudios de traducción. Espéculo 9, julio-octubre, 1998b. [http://www.ucm.es/OTROS/especulo/numero9/e\\_samanf.html](http://www.ucm.es/OTROS/especulo/numero9/e_samanf.html)
9. Samaniego Fernández E. Estudios sobre la metáfora. Espéculo 8, marzo-junio, 1998a. [www.ucm.es/OTROS/especulo/numero8/e\\_saman1.html](http://www.ucm.es/OTROS/especulo/numero8/e_saman1.html) (fecha de consulta 20 de julio de 2017).
10. Samaniego Fernández E. La traducción de la metáfora. Valladolid: Servicio de Publicaciones de la Universidad de Valladolid, 1996.
11. Samaniego Fernández E. Prescripción y descripción: la metáfora en los estudios de traducción. Trans 6, 2002, pp. 47-61.
12. Snell-Hornby M. Estudios de traducción (hacia una perspectiva integradora). Salamanca: Ediciones Almar, 1999.

#### Some problems in the translation of the metaphor

A. G. Baghdasaryan

**Abstract.** The purpose of the article is to study the different issues of the translation of metaphors summarizing the opinions of various translation scholars on this matter. Although the metaphor has become the object of many studies and different definitions and classification principles have been offered, a unanimous opinion regarding the translation techniques and principles of the metaphor still does not exist. Actually, it is a dynamic concept which is impossible to classify by strict delimitations and the selection of the translation techniques is, eventually, determined by the communicative objective of the author of the text.

**Keywords:** metaphor, translation, linguistic and extralinguistic factors, translation technique, communicative intention, dynamic concept.

#### О некоторых проблемах перевода метафоры

А. Г. Багдасарян

**Аннотация.** Статья посвящена изучению разных проблем перевода метафор на основе синтеза мнений разных переводоведов по этому вопросу. Несмотря на то, что метафора стала объектом различных исследований и были предложены ряд определений и принципов классификации, тем не менее, не существует единодушного мнения относительно переводческих приемов и принципов метафоры. В действительности речь идет о динамичном концепте, который невозможно исследовать по строгим принципам классификации, а выбор переводческого приема, в итоге, делается исходя от коммуникативной установки автора текста.

**Ключевые слова:** метафора, перевод, лингвистические и экстралингвистические факторы, переводческие приемы, коммуникативная интенция, динамичный концепт.